




ՀԱՅԲԱՆԻ ԽՈՐՀ

ԱՐԱՐԱԶԱԳԱՅԻՆ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 120

8 ՆՈՅԵՄԲԵՐ 1913

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

ԵՍ ԵՄ
ԵՆՆԱՆ
ՏՈՐԻՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.— Թուրքաց համար տա-
րեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20.— մէկ թիւ՝ 1 դհկ. —Արսաւան-
ման տար. Ֆր. 10). վեցամս. 5.— Վճարմունք կանխիկ են:

ՀԱՍՑԷ.— Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, Կ.
Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinop'e

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու եւ
յօդուած: 3.— Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին:
4.— Ձեռագիրները ետ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք
կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակադրոշմ ի միասին զրկել:

ՏՊԱՄԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5:
Տպարանս ըստ ամենայնի ճոխ և ի վիճակի է որ և իցէ տպա-
գրական գործոց համար: Կը տպուին ամէն տեսակ ծանուցմունք,
գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարդեր, քարդ-ատրէաներ,
մահազդներ, եւն., եւն.: Գիրները անւերցեղի կերպով աժան են:
Գեղեցկադիտական ճաշակի և տպագրական մաքրութեան կող-
մանէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի մնան:



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԹ-ԱԹ-ԵՐԹ

Երրորդ տարի № 8 Նոյեմբեր 1913 № Թիւ 120

«Մերազան Բանաստեղծական Պիոս Ժ. Կր մաղթե որ Կաթողիկէ Աւագանց շաբաթաբերքը շա-
բունակէ Հայաստանի Կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
սարել, ի բարգաւաճանս Կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Մերազան Հայրն սրտագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաբերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կաթող. Մէրքի սէյ Վալի, առ Ամեն. Տ. Պողոս Պետրոս Ժ.Գ. Թեղեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քու անամարտ:

ԴԵՊՐԵՐ ԵՒ ՍԱՀՐՈՒՆՔՆԵՐ

Կը ակսիմք մեծաւ գոհունակութեամբ եւ
կանխիկ շնորհակալութեամբ հրատարակել հրո-
տալից ու խորհուստ յօդուածներու շարք մը՝
ԱԶՍՏՈՒԹԵԱՆ փայլ, զորովի բարեհաճած է
մեր քերթին հասար մասնաւորապէս գրի առ-
նուլ քաջասունն եւ փիլիսոփայական ու աս-
տածաբանական խորին ու բազմակողմանի ի-
մասնութեամբ արդիւն նշանաւոր անձնաւորու-
թիւն մը, ՓՈՂ Ժածկանուանք, եւ այս երկր-
աբնութեան արտաբերած օգտակարութեան պատ-
ճառաւ Դեպքեր եւ Սկզբունքներ տեսչական
սակ կը հրատարակենք զայն իբր առաջնորդող
յօդուած, ընթերցողաց ուշադրութեան յանձնե-
լով մասնաւորապէս: Իսկ երբ նոր Դեպք մը
ստիպէ կամ Սկզբունք մը պաշտպանութեան
կարեւորութիւնը զգալի ըլլայ, վերոյիշեալ յօ-
դուածներու հրատարակութիւնը առժամաբար
ընդհատելով, պիտի փոխանակէ իսկ ստիպութեան
խմբագրել մեր Առաջնորդող յօդուածը, իսկ
պաշտանի դիպաց եւ իրաց:

Ա. ԻՆՉ Է ԱԶՍՏՈՒԹԻՒՆ

Լճիս, ստեղծագործութեան անդրանիկ
ծնունդն, որ երկնքէն ու արեգակէն կանուխ
ծածկեցիր օթոցի մը պէս տիեզերքը. որ խա-
ւարուտ անդընդախոր ջուրերէն դուրս կու
գար անպարոյր եւ անկազմ ունայնութեան
մէջէն¹, բաւ է ինչ խարխափել ազջա-
մըղջի մէջ, եւ ահա քեզ կը վերագառնամ,
կը փնտռեմ զքեզ, աչքերուս ճրագը վառե-
լու համար քեզմով, եւ դու՝ որ Աստուծոյ
ձեռքին մէջ վրձին մը դարձած կը ներկես
ամբողջ բնութիւնը եւ անթափանց ապա-
ռաժներն իսկ կ'ողողես, խուռ վիհեր կը
զուարթացնես, ամէն խորշ կը թափանցես,
միայն աչքիս է որ չես այցելեր եւ անոր
ստոնորակ բերուն վրայէն կը սահիս, կը

¹ Միշտն, Դրախ Կորուսեալ:

թափիս, չաղուելով արցունքիս ոլոռներուն
և թողլով զիս խաւարի մէջ .

Իսկ դու բնաւ չը դառնաս առնել աչացս այսոցիկ այց-
Որ ի զուր քաւալեն հանդիպել քոց սուր նրբուղիցդ
եւ չգտնեն աւալուե. այնպես ի խոր շիրիմ խաւար.
Շրլուրիւն զակնակապիս եւ կամ սփռեաց նայրոս
միքեր:

Աղեխաւրչ տրտունջ կոյր բանաստեղծին,
որ կը պատկերացնէ ազատութեան սպասող
ժողովուրդի մը դարաւոր հեծեծանքը: Այլ
եւս կրնանք ըսել, մենք կապտուած էինք,
մեր խօսքերը հեղձամղձին կուլ կու տայինք
մեր արցունքին հետ, մեր լեզուն կրճառ-
ուած, մեր քայլերը չափուած, մեր տնիքը
խուզարկուած, մեր շահերը հաղար ճնշում-
ներու ենթարկուած, պատիւ, ինչք, կեանք
վտանգուած և մենք շարունակ հարստահա-
րութենէ ընկճած, անվստահութեամբ իրար-
մէ բաժնուած ու պառակտած, թշնամու-
թեամբ դրացի ազգերու հետ զառնացած,
յուսահատ և չահախնդիր քաղաքականու-
թեան մը առջև՝ որ մեր դահիճն կ'ողոքէր
և կը զօրացնէր՝ յաղթուած Տրոյացւոյն յու-
սահատ համակերպութեան մէջ հարկադրուած
էինք բացագանչել. «Մեր միակ փրկութիւնն
է՝ ո՛չ մի փրկութիւն չի յուսալ»:

Յանկարծ օր մը ազատութեան ձայնը
լսուեցաւ, անվստահութեամբ նայեցաւ ամէն
մարդ մէկմէկու երես. հազիւ գաղտնաբար
իրարու կրցան կրկնել այդ բառը՝ մտերիմ-
ներ, վասն զի ընկեր ընկերէ իսկ վախնալու
պատճառներ ունեցած էր և չէր ուզեր զի-
մացինէն առաջ ըսել այդ բառը առանց նախ
ուսումնասիրելու խօսակցին դիմագիծը՝ ըզ-
գուշանալով թէ մի՛ գուցէ խնդրակ մը ըլ-
լայ: Չայնը աղմուկի, աղմուկը գղրղիւնի
փոխուեցաւ, և վերջապէս պաշտօնական ցոյ-
ցեր անպաշտօնականին խառնուեցան, անհա-
տէ անհատ, քաղաքէ քաղաք գետացաւ, ծո-
վացաւ ուրախութիւնն: Բառով չի նկարա-
գրուիր եղածն, արեւոյթեան ժամեր էին,
զգացումներ, գաղափարներ, վիպական եւ
երազային անցուդարձերու, յոյսերու, խոս-

տումներու և անկալութեանց մէջ կ'եռային:
Ամէն մարդ խօսիլ, ճտնել ուզեց. և ատենա-
խօսութեանց կրակոտ գոռն՝ դարերու երկար
լուծիւնը մոռցնել տուաւ:

Մնացան այդ ժամերն, եկաւ սթափանքի
ժամանակը, որուն յաջորդեց նաեւ յուսախա-
րութիւն, և ընկեր ընկերի կրկին ապշու-
թեամբ նայիլ սկսաւ ու հարցնել. Այս է ազա-
տութիւնը... Եւ աւա՛ղ, ազատութիւնը
չահագործողներու զեղծումներն այնքան ծայ-
րայեղ եղան, որ ստորնացաւ անոր վարկը
ու գաղափարը. և անոնք որ կրօնքի, բա-
րուց մտքութեան, ընտանեկան սրբութեան,
արդարութեան, համեստութեան և ուրիշ ա-
մէն առաքինութեանց աւանդական վստիւ-
թիւնը կը յարկէին՝ երբ կարծեցին թէ ա-
զատութիւնն այդ առաքինութեանց տա-
րագրութիւնն է, զայն անիծելու չափ ար-
համարհեցին: Ո՛չ, ազատութիւնն արհամար-
հելի չէ երբէք, վասն զի երբէք հակառակ
չէ առաքինութեանց. ընդհակառակն անոնց
գործադրութեան երաշխաւորիչ դիւրիւթիւնն
է, վասն զի ազատութիւնն՝ ազատականու-
թիւն կամ լաւ եւս զեղծում չէ և, ո՛չ չա-
րաչար գործածութիւն այս մեծ ձիրքին, որ
մարդուս առաւելութիւնն է անոնց վրայ,
բանականութեան բնական ծնունդն:

Ուրեմն կ'արժէ որ վարկաբեկ եղած ա-
զատութիւնն վերահաստատենք իր պատուոյն
մէջ. խլե՛նք զանիկայ անպատուողներու,
զեղծողներու ձեռքէն, ուսումնասիրե՛նք,
ճանչնա՛նք և ծանօթացնենք, որպէս զի պիտ-
ոյայ ամէն ոք զանազանել ճշմարիտ ազա-
տութիւնը՝ սխալ ազատութենէ և հասկնայ
միանգամայն որ ճշմարիտը չինիլ և ո՛չ քան-
դիլ, յարգող է ամէն առաքինութեանց, բար-
ւոյ և ճշմարիտին: Ահա մեր ընելի շը:

Ի՛նչ է ուրեմն ազատութիւնը, որ անձ-
նիշխանութիւն ալ կ'ըսուի. մէկ խօսքով ա-
նոր սահմանը տալու համար՝ կամքի չափու-
մին ինքնորոշումն է պիտի ըսեմ. բայց լաւ
հասկցնելու համար՝ հարկ է որ բացատրեմ
թէ ի՛նչ է այդ շարժումը և ո՛ւսկից կը բըղ-
խի այդ ինքնորոշումը: Կենսական այդ շար-
ժումը և հետեւաբար անոր սկզբունքը ներ-

¹ Una salus victis nullam sperare salutem.
(Վերդ. Են. Բ. 9/բբ):

քոսացած է կեանքի սկզբունքին հետ, և ապատութեան իսկութիւնն չազմող ինքնորոշումն այդ ներքոսացումովն է որ գերծ կը մընայ կապտումէ, կաշկանդումէ, կ'ըլլայ ազատ, Ուստի լաւ հասկնալու համար ազատութիւնն հարկ է ակնարկ մընեալ կեանքի և կենսական շարժումի վրայ և անկից քաղել այս խնդրոյն մէջ մեզ առաջնորդող գաղափարն:

Ինչ է կենսական շարժումն. քար մը որ վարընկեց դէպ ի երկրիս կեդրոնն կ'իյնայ, օդապարիկ մը որ երկնազնաց վեր կը բարձրանայ մթնոլորտին մէջ, ռումբ մը որ օդահերձիկ կը սուրայ, ջուրը, որ կը հոսի, օդը որ կը ծփայ, կը շարժին ամենքն ալ, սակայն կեանք չունին. ինչո՞ւ համար, վասն զի գուրտէն է մզումնին: Կեանքը ինքնաշարժումով է որ կը յայտնուի, իսկ քարը և ջուրը երկրիս ձգողական զօրութենէն, օդապարիկը օդէն աւելի թեթեւ կազի մը առձգումովն, ռումբը պայթուցիկ վառօդին ռազմութեամբ, օդը մթնոլորտի ջերմութեան անբարեկառն աստիճաններու յաջորդութեամբ և ուրիշ ազդեցութեանց ճնշումով կը շարժին. իրենք զիրենք չեն շարժեր, այլ կուրօքէն կը հետեւին ֆիզիքական, իրենցմէ դուրս և օտար զօրութեանց: Շարժիչ սկզբունքը հարկ է որ ներքին ըլլայ, որ շարժումը կենսական ըլլայ, և այդ սկզբունքի ներքոսացման աստիճանին համեմատ է կեանքերու զանազանութիւնը: Չեմ կրնար ասոր վրայ երկարել, վասն զի նիւթերնիս ընդարձակ է և կարեւոր, հարկ է շտապել. բաւական է գիտնալ թէ կեանքը երեք մեծ դասակարգի կը բաժնուի՝ բուսականի, զգայականի, և բանականի: Բուսականի մէջ ինքնաճանցումի շարժում մը կը տեսնենք, և այդ շարժումը որքան ալ արտաքին պարագայից ու պատճառներու ազդեցութեամբ պատրաստուած՝ սակայն ներքուստ է որ կը ծնի ու կը գործէ և ահա բոյսը կը ծիւ, կ'աճի, կը ճիւղաւորի, կը պտղաբերէ: Սակայն դիտեցէ՛ք թէ ապ ինքնաշարժութիւնը որքան անկատար է ինքնորոշումէ չի բղխելուն համար և կապուած ըլլալով տեղւոյ, չափի, տեսակի, ձեւի, եղանակի պայմաններու: Կազի

երկրէն նիւթ մը իւրացնելու և անով աճելու շարժումը ունի. չի կրնար զինքն տեղէ տեղ փոխադրել, չի կրնար իր գործի տեսակէն փոխել, չի կրնար եղանակէ գուրս գործել, ինքնորոշում երբէք չունի: — Զգայական կեանքը կը յաջորդէ անմիջապէս բուսականին, սակայն ախպիսի աստիճանաւորումով որ բուսականին կատարելագոյնը եւ զգայականի ստորագոյնը կարծես իրարու հետ կը շփոթին: Բայց զգայականի առաւելութիւնը կը յայտնուի գլխաւորաբար տեղափոխութեամբ և տեսակ մի ինքնորոշումով, որ երեւան կոծ գայ արտաքին տպաւորութիւններ ընդունելու և անոնցմով իր գործողութիւններն ու շարժումներն որոշելու մէջ: Բայց այդ որոշումն ալ ո՞րքան սեղմ ու սահմանուած է. նիւթական է նա և այսին ու այսին կապուած ուսանց վերացումի, առանց ինքնագիտակցութեան, առանց վախճանի պէսպիսութեան, առանց ծանօթութեան և առանց ընտրելու միջոցներ, աստիճանաբար զանոնք այդ նախորդ վախճանին, ասոր համար զարգացում չունի եւ չպիտի ունենայ. Թուշունը հազար անգամ ապակիի պիտի զարնուի, հազար անգամ պիտի փորձէ անկից գուրս ելլել, անոր ճարտարութիւնը բոյն չի նկատ մէջ դարերն իսկ չպիտի փոխեն. շունը իր բերնի պատառը պիտի ձգէ՝ ջրոյ մէջ խոշոր երեւցած շուքին հետեւելու համար. ուրիշ զգայականներ մարդակերպ գործեր պիտի կարենան ընել՝ բայց մեքենաբար, և եթէ վարժեցնելու ըլլատ, կոյր հետեւողութեամբ և մասնակի գործելու մէջ. Երբէք պիտի չզարգանան, ո՛չ իրենց ձայնը խօսքի պէսպիսութիւնն ու նորութիւնը, ո՛չ գործերնին արուեստի ճարտարութիւնը և յառաջացումը պիտի ունենայ, այլ պիտի մնայ ուր որ է և ինչպէս որ է: — Ասկէց վեր կու գայ մարդու կեանքը, բանական կեանքը. որուն մէջ կը տեսնենք անմիջապէս ներքին սկզբունքի տիրողութիւնն շարժումին վրայ, որ ո՛չ միայն ինքնաշարժում է, այլ նաեւ ինքնորոշ է, ինքնընտր, մարդն՝ ո՛չ միայն արտաքին տպաւորութիւններն կ'ընդունի՝ այլ անոնց վրա

յէն կը ճախրէ վերացական գաղափարներու տեսութեանց մէջ և հոն կատարելութեան անհուն հորիզոնին դիմաց, բացարձակ բարեոյն տեսչանքի բռնութեամբ՝ ինքնիրեն վախճան մը կը սահմանէ, միջոցներ կ'ընտրէ առ այն համակերպ, վախճանի բոլորակին կ'ապուցէ միջոցներու ճառագայթներն, անիւն շինած է անոր թաւալումովն յառաջանալու համար դէպի զարգացում: Կը սուրայ, հեռաւորն կը մօտենայ իրեն, անծանօթն կը ծանօթանայ ու գտած գաղանիքներովն կատարելութեան սանդուխի աստիճաններ կը շինէ. արհեստ, գիտութիւն կը բարեփոխուին միշտ, և կարելի կը մնայ շարունակ նորանոր յառաջխաղացութիւն:

ՓՈՂ

(Շարունակելի)

Երջանկայիշատակ Կարգ. Հասուն Կ. Պատրիարքին հոգեհանգստեան արարողութեանց առթիւ, իւր հետեւեալ կենսագրականը գոհութեամբ կը հրատարակենք:

Le Monde hebdomadaire մեկուսրասրերն 1880 սեմեաի Դեկտեմբերին 25իննի ճումսա իրքեսի կիւնի 11 նիւմերօլը նիւսիսինսննն նալլին քերհեմե օլունմուս սր:

ԳԱՐՏԻՆԱԼ ՀԱՍՈՒՆ

Gerarchia Cattolicaըն կէկտիկէրինի թագիպ իտէն պիր գաչ թապարընտա պիր էսէրի սէհվ օլարագ կէօրիւմէքտէ տիր քի Գարտինալ Հասունըն թարիսի թէվէլլիւտիւ օլմագ իւզրէ 1800 թարիսի գօնուլմագտա վէ պու սուրէթլէ միւշարիլէյին սիննի աուլիսինէ 9 սէնէ իւլվէ իտիւմէքտէ տիր: Հալպու քի Մօնս. Հասուն 1809 սէնէսինտէ Յուսին 13 իւնճիւ կիւնիւ, համըլլա միւսէմմա օլտուղը Ս. Անտօնըն եօրթուսընտա Սթամպօլտա թէվէլլիւտի իթմիշ տիր: Փիւհագիգա տա պու 1809 թարիսի Gerarchiaըն գատիմ թապարընտա, մէսէլա միւշարիլէյին Եպիսկոպոս օլտուղը 1842 սէնէսի թապընտա տախի միւշահատէ օլունմագտա տիր: Պինաէն ալէյի իսթիհալընա միւվէֆֆագ օլտուղըմ սայիր վէսայիգի տէ նազարը իթիւպարա ալտըղըմըզտա, Գարտինալ Հասունըն 71 տաշընտա օլտուղը թէհագգուկ իտէր:

Հէմ տէ ծնուն կէօրիւնիւշիւ, պա խուսուս պագըը, ծնտա հէնուզ պագի օլան տիրի գուվլէթի գալպիյէյի իզհար իթմէքլէ պէրապէր, կէչիւրմիշ օլտուղը ըէսուլանէ ուզուն մէշաղիլին էսէրի նէճիպլինի վէ հայաթընըն քէսպի իշթիհար իթմէսինէ սէպէպ օլարագ, պիր թարիգի խիւտարէսէնտլէ քէնստիսի գարտինալլըգ մանաըսը ալիսինէ իրֆա ու իրչատ էյլէյէն, մէրտանէ չէքմիշ օլտուղը մէզահիմի տէ իրայէ իթմէքտէ տիր:

Գարտինալ Հասուն տինին շահիտի հագըգիսի, իւնտէսինէ թէվտի օլունան սիւրիւսինն սէլամէթինէ թէչնէ պիր Չօպան օլուպ կեան թահգիր օլունմուշ, կեան իզալ իտիւմիշ, պագէն չէթմ ու սիթէմէ մարուզ գալմիշ, պագէն տէ ֆէվգ էլ առտէ ալլըշլանմըշ իսէ տէ, պու հալլէրին հիշ պիրինտէն տէ միւսթէնսիր օլմամըշ, տայիմի սուրէթտէ քէնստիսի իչուն իքինճի պիր թապիւթ հիւքմիւսինն ալմըշ օլան սէպաթ ու չէֆագաթը, ալմ ու մէթանէթի հալիմանէյի, էն միւշքիլ ումուրըն պիլէ թէմէթի ու իտարէսինտէքի թէճրիպէքեարըղը, թէվագու վէ իսթիգամէթի հիշ պիր վագըթ ղայիպ իթմէմիշ տիր: Օնուն հայաթը մանէվիյէսինին պու թապիւրի, հայաթը մատարիյէսինի տէ թանգիր իտէր: Գարտինալ Հասուն, ֆէտաքեար վէ սատագաթչիար ուզուն պիր հայաթըն ծնուն ալնընա թէվտիմ իթիտիի պուրուշըղըղա ըաղմէն, հէր վագըթ պիր բունը թաղէ ղինտէլիյին կէօսթէրմիշ վէ մէլէքէյի ալլիյէսինէ տայիմա սահիպ օլմուշ տըր: Գըրգ սէքիգ սէնէ քահանալըգ, օթուզ սէքիգ սէնէ տէ կպիսկոպոլըգ իթմիշ վէ ծն իւշ սէնէ տախի Կիլիկիա Բաթրիպլիյինի իտարէ էյլէմիշ տիր:

Մօնս. Հասունըն գարտինալլըգ բայէսինէ իրթիգաը, քէնտիսի իչուն օլտուղը գատար տա օն իւշիւնճիւ Լէօն Բաբա հագրէթլէրինէ մուճիպի շէրէֆ տիր: Բաբալըգ վէ էրմէնի մըլլէթինին թարիսինտէ պու վագտա, վէգայիի մշչուրէսէն տատ օլունսա սէզստըր:

Պու վագաանըն հայիգ օլտուղը էհէմմիյէթի վէ Գիլիսանըն Ռէյիսի էքպէրինին պու խուսուստաքի գարարընըն իսապէթինի պի-

հագգին թագուր խտեպիլմէք իչուն, էրմէնի ծեսինտէն իլք տէֆա օլարագ Բօմա Բիլիսա- սը Սէնաթօսընա գապուլ օլունան պաթը միւլթէրէմսիմաթ հագգընտա պազը մալիւ- մաթ ֆայիտէտէն խալի օլմայաճագտըր զան- նընտայըմ:

Մօնա. Հասունըն թէրճէմէյի հալինտէ էն զիյատէ հագարա չարբան ճիւնթ շու օլմուշ- տըր քի, Հիքմէթի իւահիյէ, ծնը էն աղըր թէհիքէլէրտէն մուհաֆազա էյլէմէք, թա- լիմաթը հագգըգիյէնին մէնապիի սաֆիյէ վէ ճէյիտէսինտէ թէրպիյէ իթմէք, հէր տիւր- լիւ մէվանիէ վէ մէգասիտը մուխալիֆիյէ րալմէն իւհաւէսիյէ Կիլիկիա Բաթրիպլիյինի թէվտի պըլմազ, նիւհայէթ գարաինալլըզ րիւթպէսինէ իրֆա իթմէք խուսուպընտա պիր ճիւվէյի մախսուսէ կէօսթէրմիշ տիր:

Տահա տօպուզ հաշընտա իքէն գույուհա աիւլմէք վէ մանտա արապասը ալթընտա գալմագ կիպի հայաթընը թէհիքէյէ իլգա իտէն իքի պէօյիւք գազասէն գուրթուլմը տըր: Այնի թարիխտէ (1818) աղըր սուրէթ- տէ խաթթա օլմուշ վէ ինսանի չարէլէրին ֆայիտէսիզ աստ օլունտըրը պիր բաստէյէ կէլմիշ տիր: Տինսար վալիտէսի, էվլասը չիֆաբէզիյը օլուրսա ծնը քահանալլըզա ճէնապը Ալլահա վազֆ իթմէք եօլունտա ալիճէնապանէ նէզըտէ պուլունմըշ տըր: Բիւշիւք Անտօն իֆագաթ պուլուր, վէ վա- լիտէսինին ուխսընը գապուլէն թասաիք ի- տէր: Օ վազըթաան իթիպարէն արթըզ ծնուն մահգուզիյէթինի անճագ տուա վէ թահսիլ թէշքիլ իտէրլէրտի: Ֆագաթ օ գէմանլարտա քահանալլըզա հազըրլանմագ Սթանպուլճա գօլայ շէյլէրտէն տէյիլտի: Կղի- րանոց օլմատըրը կիպի, մաշէթինտէ եպիս- կոպոսը պուլընմայան պիր սէրբիսգօրօս թա- րաֆընտան էրմէնի Գաթօլիք ճէմաաթընըն պու վասի գըսմը իտարէ իտիլիտի: Պու ճէ- մաաթըն գըսմը տիկէրի, մէրքէզի ճէպէլ իպնանտա Զամաւտա օլան վէ Կիլիկիա Բաթրիպլիյինի թէշքիլ էյլէյէն պիր իտարէյի մախսուսէյէ թապի իտի: Էրմէնի Գաթօլիք- լէրին պու իքի իտարէլէրինի թէվհիտ իթ-

մէք, Կիլիկիա վէ Սթանպուլ Բիլիսալարընը պիլլէշտիւրէրէք, մէրքէզի իտարէսինի Տէվ- լէթի Օսմանիյէնին բայիթախթընտա թագ- րիր սուրէթիլլէ պիր բաթրիպլիք թէէսիս իթմէք իլէրիտէ Մօնա. Հասունա նասիպ օլաճագտը:

Կէնճ Անտօն տահա 1է եաշլարընտա ի- քէն, քահանալլըզ իչուն թահսիլի լազըմ կէ- լէն իլմի էօյրէնմէք էմէլիլլէ Բօմայա կիտէր: Պու իլք եօլճուլըզ էմանաընտա խալի զահ- մէթ չէքէր: Բաքիպ օլտուղը կէմի 1823տէ Եունանիսթանտա գուհուրա կէլէն գարըրգ- լըզլար սօլայըսըյլա չըմարան գուրսանլարա գարըր գօմայա մէճպուր օլուր: Մա մաֆիյ, հիմայէյի մախսուսէսինէ եէնի պիր տէլիլ վէ իլէրիտէ մարուզ գալաճաղը միւշքիլաթլա իւշֆէթ բէյաա իտէպիլմէսի իչուն եէնի պիր գուվվէթ վէրմէք իսթէյէն Հիքմէթի իւահիյէ ծնը գուրսանլարըն էլինտէն գուրթարըր վէ շէհրի շէհրի Բօմայա տախիլ իթտիրի:

Պուրատա պաշգա միւշքիլաթլարա մա- րուզ գալըր: Հէր նէ գատար տա էլինտէ, քէտի, Արքեպիսկոպոսընտան թավարյէնա- մէսի վար իտի իտէ տէ, բէք աճէլէ իլէ եօլա չըգմըշ օլտուղընտան, թահսիլի իւլում իտէ- ճէյի Բրօբականտա մէքթէպինին գաբուլարը պիր միւտտէթ իչուն գարըրսընտա մէստուտ գալըր: Զիւնքի պու մէքթէպէ գայա ու գա- պուլ օլունապիլմէք իչուն, թավսիյէնամէտէն պաշգա, պիր տէ բէյիսի մէքթէպ իլէ թա- լէպէ իլգամ էյլէյէն լուէսայը բուհանիյէ ա- րասընտա իթիլաֆա լիւզում վար տըր:

Իշթէ պու սէպէպէ մէպնի պիլիմ կէնճ թալիպ պէօյիւք ֆէտաքէարըզլարա կէօյիւս վէրէրէք պու միւշքիլաթըն հալլ օլընմասընա քէմալը թէսիլիյէթլէ ոսպըր էյլէտի:

(Մապասի վար)

ԵՐ. ՏԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՆԱՀԱՏԱԿԻՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վ. Ա. Ս. Ն.

յիսին ժամանակիս ազգիս մերոյ հակառակութեան
որ ընդ միմեանս վասն Դարողիկոսեան, եւ յա-
ղաքս որոյ յայտնեայ ումեմն երկրորդ շուսաւորից
կոչեցեայ յումանց, եւ վասն մորի՞ն գործոց եւ
վարուցն, եւ վասն հաւնախոհից նորին:

Դարձեալ ոմանց փոքր տղայքն յորժամ
մեռանէին՝ ոչ տայր զհրաման առ ի թաղել
զնոսա՝ թէ՛ զաւակք Կաթողիկէից են.
վասն որոյ տանէին զհարս նոցա եւ ասէին
թէ՛ յորո՞ց հաւատոց իցես դու, նա պատաս-
խանէր թէ՛ քրիստոնեայ եմ: Ասէր չարա-
հնարն այն Իզմիրցին թէ՛ «ընդունի՛ս զԴէոս-
կորոս, զՅոնան Օձնեցին, զՍտեփանոս Սիւ-
նեցին, զՊօղոս Տարոնացին, զԴօշի Վանա-
կանն, զՈրոտանեցին եւ զՏաթեւացին»:
Պատասխանէր հայր մեռելոյն թէ՛ ես զյըպ-
րու թիւն ոչ գիտեմ եւ ոչ զլեզուս Հայոց,
մանաւանդ թէ՛ ջանայցեմ հազիւ թէ՛ տարի
մի բոլոր կարիցեմ սովորել զանունսդ զայ-
դոսիկ, թո՛ղ թէ՛ գիտիցեմ զոր ասացերդ թէ՛
ո՞վ ոք իցեն գոքա: Միայն զայն գիտեմ զի
Քրիստոսեայ եմ եւ զաւանուածեմն Սրբոյն
Գրիգորի մեր Լուսաւորիչին եմ, եւ որդի եւ
ծառայ նորա: Ասէ ցնա խորամանկն Իզ-
միրցին. Ապա նշովէ՛ զԼեւոն Հայրապետն
Հռոմայ: Ասէ ցնա տշխարհականն. Ես մե-
ղաւոր այր մի եմ, զլ՛արդ կարացից նզո-
վել զհայրադեալ ոք: Ասէ ցնա մոլեալն.
Ասա՛ թէ՛ աղբեմ ի մօրուսն Լեւոնի: Իսկ
այրն իբրեւ յուսաւ զայս՝ խղճէր եւ երկնչէր:
Բայց գայթակղեցուցիչն Իզմիրցի բռնու-
թեամբ սախէր ասել զաղտեղի զբանն, եւ
մինչ ասել ոչ տայր ոչ հրամայէր թաղել
զմեռեալն: Իսկ ոմանք որք ոչ ասէին զգար-
չելի խօսան՝ առանց քահանայի թաղէին
զմեռեալս նոցա:

Արդ եղբարք՝ լուսո՞յք արդեօք զամբար-
տաւանութիւն գոռող զոցոսիւն այնմիկ,
միթէ՛ օրէնքն մեր պահանջե՞ն զայս ի մէնջ,

միթէ՛ ա՞յսպէս աւանդեցին մեզ սուրբ հարքն
մեր. միթէ՛ ոք յառաջնոցն մերոյ զրեա՞ց
երբէք զայսպիսի իր, թէ՛ այսպիսի գարչելի
խօսիւք տուք հայհոյութիւն ումեք. կամ ա-
սացին թէ՛ աղտեղի եւ զաղիր բանիւ անար-
գեցէք զհերձուածող զորք, թող թէ՛ զայնպի-
սի այր, զոր երկու մեծամեծաց աղկաց,
այսինքն Լատինաց եւ Յունաց պատուի եւ
տօնի, որ եւ զպատկերն նորին նկարեն յի-
կեղեցիս իւրեանց: Թողում զԼատինսն, այլ
ազգն Յունաց ի Փետրվարի ութեւտանին
սօնախմբէ եւ զյիշատակսն կատարէ յեկե-
ղեցիս իւր եւ սուրբս վերածայնէ:

Բայց եթէ ասացէ՛ Իզմիրցին այն եթէ
Քաղկեդոնիկ է վասն այն նշովի եւ անարգի
ի մէնջ, ապա ծանիցէ հոգւով կոյրն այն՝ զի
բազումք գոն որք Քաղկեդոնեանք են եւ
կոչին ի մէնջ սուրբ եւ պատուին եւ փա-
ռաւորին, որպէս Հռովմայ սուրբ Հայրապետն
Գրիգոր, եւ Պատրիարքն Կ. Պօլսոյ Ս. Հայ-
րապետն Գերմանոս, սուրբ Հայրապետն
Հռովմայ Աքապիոս, սուրբ Յովհան Ողորմած
Հայրապետն Աղեքսանդրու, սուրբ եւ մեծ
ճգնաւորն Բենէտիկոս, թագաւորն Հերակ-
լիոս, սուրբ Հայրն Սաբայ, Թէոփիլոս զօ-
րավարն, սուրբ ճգնաւորն Ստեփաննոս եւ
այլք բազումք:

Արդ սոքա ամենեւեան վերագրեցեալքս
զկնի ժողովոյն Քաղկեդոնի էին, եւ ընկալ-
եալք իւրաքանչիւրն զժողովն զայն. եւ
եթէ Քաղկեդոնեանքն հերձուածողք իցեն եւ
ուրացողք, որպէս երգի ի շարականն մեր,
ապա ընդէ՛ր ընդունիմք զնոսա սուրբս եւ
ընտրեալս, որք գրեն եւ յիշատակեն իբրեւ
զսուրբս, եւ իբրեւ զատուածածանօթս, եւ
այրս իբրեւ նշանագործս, մանաւանդ թէ՛ եւ
բարեխօս իսկ կաշնումք զնոսա առ Քրիստոս:

Բայց դու եղբա՛յր ե՛րթ առ յայտաւոր-
սն մեր եւ մտադրութեամբ գիտեա՛ զնա եւ
այնու ծանի՛ր եւ շատ է քեզ, եւ ոչ այլ
ուրեք առաքելից զքեզ զի մի աշխատ լինի-
ցիս, եւ եթէ՛ զհաւատս ինչ ունիցիս եւ
յոյս եւ այն բաւական է քեզ եթէ՛ սիրով
ընթեռնուցուս զնոսա:

Դարձեալ մեծ Սուրբ Ներսէս Կլայեցին

երգէ ի շարականսն իւր, եւ զնոյն ընկալ-
եալ մեր եւ մեք եւս երգեմք ասելով — թէ
«համաձայն խաչազգեցիցն զքեզ օրհնեմք
յաւիտենից»։ Միթէ մի՞ք միայն խաչազգեաց
եմք, եթէ այլ ոք եւս ի Բրիստոնէից, որ
այսպէս ասէ երանելիս, եւ մեք։

Դարձեալ յորժամ զանդաստան օրհնեմք
ի հրաշալի տէրունական տօնս, ասեմք
«օրհնեսցի եւ պահպանեսցի արեւմտեան կողմն
սալսարհիս եւ իշխանութիւն Բրիստոնէից»։
Եւ ապա դառնամք եւ ուրացող Բրիստոսի
կոչեմք զնոսա, նոյովեմք եւ անիծանեմք։
Արդ, եթէ Բրիստոնեայ իցեն որպէս ասեմք
զնոսա Բրիստոնեայս եւ օրհնեմք եւ ապա
զիրադ կարասցուք զարձեալ կոչել զնոսա
ուրացողս։ Բայց եթէ ուրացողք իցեն ճշ-
մարտապէս ըստ կարծեաց նոցին, ապա ո՞ր-
պէս Բրիստոնեայս ասեմք զոլ զնոսա եւ
օրհնել։

Արդ, ներեցէ՛ք եղբարք ուղիղ համար-
ձակութեանս իմոյ, զի վասն այսորիկ յոյժ
տարակուսութիւն ունիմ, եւ ոչ ոք կարաց
լուծանել զտարակուսանս զայս ի մերոց
վարդապետաց ոք։ Բայց ոմանք վարդապետք
այսպէս պատասխանեցին թէ զայս սոյսպէս
ասեմք եւ զայն այնպէս եւ աստ վեաս ոչ
զոյ, իբրեւ թէ երբեմն օրհնեմք զնոսա
քրիստոնեայ զաւանելով զնոսա, եւ երբեմն
անիծանեմք որպէս զհերձուածողս եւ զու-
րացողս։ Եւ այսու առաւել եւս զարձեալ ի
տարակուսանս արկանեն զմեզ։ Ապա ո՞ւր
դիցուք զքանս առաքելոյն Յակոբայ որ ա-
սէ. «Միթէ աղբիւր անդատին ի միոյ ականէ
բղիւիցէ՞ քաղցր եւ դաւն», որ եւ խրատէ
զմեզ թէ ոչ է պարտ զի ի նմին բերանոյ
եղանել օրհնութիւնք եւ անէ՞ծք։ Զի՞նչ ասէ,
տե՛ս. «Ոչ պարտ է եղբարք այսմ տոյսպէս
լինել. միթէ կարիցեմք սատանայի երբեմն
Աստուած ասել եւ երբեմն զեւ, այսպէս
հակադարձաբար, Աստուծոյ՝ երբեմն Աստուած
խոստովանիլ զնա եւ երբեմն ոչ. մեղայ Աս-
տուծոյ ոչ կարեմք ասել բանիւ եւ ոչ բնաւ
իսկ ի միտ ածել, վասն որոյ զարձեալ մե-
ղայ ասեմ Աստուծոյ։ Ապա զանկարգ հայ-
հոյանս, զի թուոք մահաբերին, զիմօրդ

կարասցուք զգայուել ի բերանոյ մերմէ։
Դարձեալ տե՛ս զի՞նչ ասէ այն աստուածա-
զան առաքելս. կրօնաւոր՝ եթէ ոչ սան-
ձահարեացէ զլեզու իւր՝ վայրապար է նմա
կրօնաւորութիւնն իւր։ Վասն որոյ վայրա-
պար է ապա եւ քրիստոնէութիւնն մեր
յայսմ վայրի։ Արդ զարձցուք մեք աստանօր
զյառաջարկեալ բանս մեր։

(Շարունակելի)

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Այս թիզդոսի ներքեւ գրուած յօդուածը կը դիմուի
մեզ, ի հրատարակութիւն։

Բերս 1 Նոյեմբեր 1913

Գերապայծառ Տէր խմբագրապետ, կը յու-
սամ թէ Կ. Արձագանգ թերթիդ մէջ կը հա-
ճիք ներկայ յօդուածիս անդ մը շնորհել, ո-
րովհետեւ անիկա՝ իր այժմէական մեծ հետա-
քրքրականութեամբը, զուրկ չի կրնար նկատ-
ուիլ շահեկանութենէ։

Յայտնի է որ անցեալ շաբթուան մէջ էջ-
մաճնական Հայոց կողմէ սարքուած յո-
բելեանական տօնախմբութեանց աղմուկին
մէջ խղղուելու չի կրնար բնականաբար դա-
տապարտուած քլլալ այն բաւական նշանա-
կալից դէպքը որ Հայ բողոքական հասարա-
կութեան աշխարհային վարչութեան ճակա-
տագիրը հիմնովին կը փոխէ, փակելով ընդ
միշտ անոր առանձնայատուկ եւ ինքնուրոյն
գործունէութեան իրաւունքը, եւ նետելով
զայն Հայ էջմիածնական Սահմանադրու-
թեան Լաբիւրինդոսին մէջ։ Ազգային միու-
թեան այս մեծ ահաւ աղմկալից յօդուածնե-
րով փողահարեցին թերթեր, ինչպէս ծափու-
հարած էր ժողովը մոլեգին, խուճապ մը ե-
րեսփոխաններու մասնագործովին կողմէ բո-
լոր յարանուանութիւններու ուղղուած գրա-
ւոր կոչի մը վրայ, զոր ժողովը վեհօրէն ըն-
դունած էր յոտնկայս։ Շոալուած արարո-
ղութիւնք վեհաշուք եղած են, որդիւնքը
սակայն կ'երեւի երկբայական։ Վարձանց
պսակի զգործ։

Եւ չեմ հասկնար թէ բողոքականաց կողմանէ այդքան ասպետական դոկտրինան մը ի՞նչ կը նշանակէ, իրենց կոթիւը եւ ներքին երկպառակութիւնը վերջացնել, աւելի լայն հորիզոններով հետամտել, անկարող եւ սնկերպարան ազգապետութիւն մը մեծագոյն սահմանադրականութեամբ փոխարինել, թէ ա՛րդեօք շատ թագուն յետին միութեան մը սնուցանել, փայփայել...

Կարճ խելքովս կ'ըսեմ թէ, անոնք՝ բողոքականները, ոչինչ ունին կորսնցնելու այս միաբանութենէն, ոչ փայլ ո՛չ գաղափար. առաջինը կ'աւելնայ, երկրորդը կը յաղթանակէ. աւելի կը փառաւորուին, աւելի կը զարգանան. Մանաւանդ, կարծեմ, այս երկրորդ շարժառիթը՝ գաղափարի, մղած պիտի ըլլայ գիրենք. Բիչ մը մեկնեմ միաքա՛ն:

Քաջածանօթ է ամենուն որ բողոքականները՝ հերետիկոս եկեղեցիներուն ամենահերետիկոսն են եւ իրենց մէջ իսկ անթիւ հերձուածներ ունին: Ուստի հերձուածող Եկեղեցւոյ մը մօտենալէն ընաւ վախ մը չունին թէ բան մը կորսնցնել կարենան՝ անհարկի շփումով ու կենցաղավարութեամբ, թէեւ աշխարհիկ գործոց համար ըլլայ: Մանաւանդ թէ շատ կը շահին. քանզի հերձուածող արեւելեան եկեղեցի մը՝ վերջապէս քիչ շատ պահպանողական ըլլալով, այնպիսի հաւատալիքներ ունի, զորոնք բողոքականները կը մերժեն: Արդ, այսպիսի շփումով բողոքականք կրնան յուսալ որ այդ եկեղեցւոյն հաւատալիքները կամաց կամաց քերթեն, կործանեն, ոչնչացնեն, ահա իրենց շահը, թէեւ անզգամ: Բայց այդ յոյսը ստուգութեան կը վերստի, երբ խնդիրը էջմիածնական եկեղեցւոյ վրայ է. որ՝ ահեղօրէն անխտրական է՝ նոյն իսկ ի՞նչ ամենաբարձր նուիրապետութեան ուսուցումով, որ՝ իր ծոցին մէջ ունի բարձր նուիրապետներ, որոնք արդէն կը ճշդնին այս հաւատալիքներէն շատերը ոչնչացնել. — եկեղեցի մը՝ որոյ կրօնականք եւ աշխարհականք, — անբաժան դատաւորներ — առաջարկութեամբ էջմիածնի Աթոռոյն, ձեռնարկեցին բողոքամ մը կազմելու էջմիածնական եկեղեցւոյ մէջ՝ ժամանակի պահանջումներուն

համաձայն նորոգութիւններ ներմուծելու. եւ ներմուծեցին բողոքամին մէջ նոյն իսկ հաւատալեաց փոփոխութիւն, ընդ օգոսն ցնդեցնելով ահա իրենց յոխորտարան եւ սուտանուն պահպանողականութիւնը. — եկեղեցի մը՝ որ, վերջապէս, շարունակ աշխարհականներու քմածոյքին ենթարկուած է, եւ բողոքականները քաջ գիտեն թէ ասոնց մեծագոյն մասը, ինչպէս նաեւ եկեղեցականաց, վարակուած են բողոքական անսանձ ազատամտութեան խօթութեամբը. — Լուտերի եւ Բա՛րդի ետաւէր եւ հետեւաբար դժոխային ժառանգութիւնը: Ուստի քիչ մը չփում. քիչ մը կենակցութիւն, եւ ահա տակաւ առ տակաւ էջմ. եկեղեցին կը գրորի բողոքականութեան ծոցին մէջ, ուր ա՛րդէն կը դիմէ թաւալվոր: Ի՞նչ մեծ շահ, ի՞նչ ակնկալութիւն, ի՞նչ քաղցրաժպիտ հորիզոն Բողոքականաց համար,

Հարկա՛ւ թէ գրկաբաց կ'ընդունին ուրեմն բողոքական հայերն՝ էջմիածնական հասարակութեան այդ առաջարկն ու կը միաբանին:

Բայց դժուարութիւնը Հայ Կաթողիկէնութեւ համար է, որովհետեւ ասոնք նախ այս ոսկեղօծ բառերէն, այս չափերէն, այս սին ու խարէզատիր կրկներեւոյթներէն չեն խաբուիր, իրաց ներքսագոյն կողմը կը նկատեն. ազգը կը սիրեն, բայց իրենց կրօնքին չեն դաւեր ու զայն վտանգի չեն ենթարկեր. երկրորդ՝ շահելու բան չունին ամենեւին, կորսնցնելու շատ բան:

Բիչ մը աս կէտերը պիտի չօշափեմ:

Նախ ըսեմ թէ այս համազգային միաբանութիւնը քարոզութեան չափ օգտակար չեմ տեսներ եւ, չաղաքագիտօրէն, Կարելի է թէ տեսութիւնս կարճ ըլլայ, բայց եւ հետաւանութիւն կը կարծեմ ենթադրելը թէ այդ տեսակ շունդալից Միաբանութիւն մը մեր մասում կարծած՝ բայց միայն տակ անթեղուած կայծը արժարծելու, մեր մուռած կարծած՝ բայց միայն քնափող դիւրազգայութիւնները, դարանակալ ուշադրութիւնները, անջնջելի կասկածները արթնցնելու ցցուեցնելու պիտի ծառայէ, եթէ ոչ ակնյայտնի, բայց ան-

տարակոյս թագնաբար . և ծածուկ աջը պիտի գործէ , պիտի նիւթէ այս ուղղութեամբ , և յուսացուած գործունէութիւնը պիտի չլատէ՝ անշուշտ , պիտի ջախջախէ՝ հաւանօրէն : Մինչդեռ խաղաղացած ու մեր բարօրութեան ուշ դարձնող պետութեան մէջ իւրաքանչիւր յարանուանութիւն առանձնակի շատ բան պիտի կրնար ընել հայուն երջանկութեան համար , պայման՝ զիրար չհալածել , չնսխառել , հանդարտ թողուլ : Հայն ի բնէ անհեռատես է . շատ կը բռնկի , երազներով կ'օրօրուի , երեւոյթներով կը պատրի , ուրիմն՝ կը մնասուի , բնականաբար :

Բայց աստի , ես կ'ըսեմ թէ Կաթողիկէ Հայոց աշպխի միաբանութեան մը մէջ . հետնելը անկարելի է :

1. Հայ Կաթողիկէութիւնը Օսմանեան պետութեան մէջ մասնաւոր կազմակերպութեամբ , առանձնաշնորհումներով , արքայական ֆէրմանով իբր օրինական հասարակութիւն մը ճանչցուած է՝ աւելի քան ութսուն տարիէ ի վեր , և իր հոգեւոր Պետը՝ որ միանգամայն Կիլիկիոյ Կաթողիկոսն է , պաշտօնապէս ճանչցուած է իբր Գլուխ այն հասարակութեան , Կանոնաւոր վիճակի մէջ , իր ներքին վարչութիւնը շատ իմաստուն , և իր ազդեցութիւնը շատ զօրաւոր է : Այս ամէնը որ արդէն Հայ ազգին համար փառք է եւ ցարդ յառաջադիմութեան գլխաւոր ազդակն եղաւ և է դեռ եւս , ինչո՞ւ զոհել անստոյգ պատահականութիւններու , կամ լաւ եւս , ստոյգ չփոթութիւններու :

2. Մանաւանդ որ այս Հայ-Կաթողիկէայ ինքնուրոյն կազմակերպութիւնն է որ հազիւ ուրեմն կրցաւ ազատել այս հասարակութիւնը անօրինակ խզողութիւններով ծանօթ՝ դարաւոր , անվերջ , անիրաւ հալածանքներէ , որոնք մարտիրոս ժողովուրդներու կարգը զսասած են զինքը : Փորձուածք կրկին փորձել յիմարութիւն է : Ինչո՞ւ առանց ո և է հարկի , կրկին նետուել շատ հնարաւոր վտանգներու մէջ ... To be or not to be ...

3. Նա մանաւանդ որ իբր ազգօգուտ քարոզուած այս միութիւնը ուրիշ բան չէ պարզապէս եթէ ոչ անօգուտ և քիչ մը ան-

միտ անձնատուութիւն մը , խոնարհ և աննրկարագիր անձնամատոյց զոհողութիւն մը , կասկածելի գիրկերու մէջ ... գետակի մը ընկղմումն է , անձնական անյայտացումն է՝ աւերող հեղեղի մը մէջ : Խիստ է բանի այդ : Կը հասկցուի արդէն յետագոյն գաղափարը : Կաթողիկէութիւնն է որ վախ կ'ազդէ նորեւելներու իր անդրադարձի սկզբունքներով ու խիստ կարգապահութեամբ , հետեւաբար ամէն գնով ու ճամբով կ'ուզուի ջնջել Կաթողիկէ հասարակութիւնը ... Delenda Carthago!

4. Բայց հիմա առաջարկուած խնդրոյն խորը քննենք քիչ մը , անկէ՝ հանենք ամենակարեւոր հետեւութիւնը :

Կ'առաջարկուի որ ամէն Հայ յարանուանութիւնք—Ա. օգտուին հայ էջմ . Սահմանադրութեան շնորհէն , և առ այս՝ —Բ. լքանեն իրենց ուրոյն վարչութիւնը և միանան էջմ . հայոց Սահմանադրական ժողովներուն . — Գ. անվթար պահպանեն իրենց կրօնական տեսակէտն ու հանգամանքը :

Ա. Ստիպուած ենք բնելու որ մենք բացարձակապէս կը դեղեւինք կը տատամսինք Հայ էջմ . Սահմանադրութեան ճեղքի մը ըլլալը ընդունելու և խոստովանելու : Ամէն օր գրեթէ կը հանդիպինք էջմ . թերթերու երեմիական ողբերուն՝ Սահմանադրութեան սկզբէն ի վեր բնաւ օգուտ մը չըրած ըլլալուն վրայ , որ՝ տրամաբանօրէն , չարիք մը ըսել է : Շուրջ յիսուն և աւելի տարիներէ ի վեր «յիսուն տարի շարունակ սահմանադրական ջուր ձեծելուց յետոյ» (Զաւարեան , վերջին յօդ .) ի՞նչ ըրաւ Սահմանադրութիւնը , ի՞նչ բարիքներ գործեց իր անգործութեամբ , իր անհրաժեշտ կուսակցականութեամբ , իր մոլորեալ վարչականութեամբ ... աղմուկ , քմահաճոյք , կրքոտ բռնակալութիւն : Եւ հիմա սկսաւ զուտ եկեղեցական խնդիրներ պատգամել , վճռել , ի հեճուկա ամբողջ նուիրապետութեան հակառակութեանը . վկայ կ'արձանանայ յաւէթ՝ Երուսաղէմի միաբանութեան զփախտ խնդիրը ... Մենք աս տեսակ շրջադրանքներու վարժութիւն չունինք , և զանոնք պատժենք որ քաջառաքար մերմ բլլան այս տխուր խորհրդածութիւնները , ո՛չ ամենակին

ինչպէս ըսինք, եթէ ուշադիր հետեւեցաք, ժամանակէ մը ի վեր մանաւանդ, Հայ Էջմ. թերթերու տեսութիւններուն, բոլոր մեր ըսածները իրենք ալ կը հաստատեն, միայն թէ իրենց անհետեւողական ոգիովը, երբ ուզեն՝ գոյն կը փոխեն ու գաղափար, գէշը՝ աղէկ կ'ըլլայ ու փեսայական՝ օգտակար։ Սակայն և այնպէս, Պատմութեան Փիլիսոփայութիւնն է որ պէտք է առաջնորդէ ուշիմ ու վարչական մարդոց. աղմուկ ու փայլ կ'անցնին, դասը պէտք է մնայ։

Բ. Բայց, քանի որ կ'ուզեն ոսկեզօծ դեղահատիկ կլլեցնել՝ պնդելով թէ զուտ կրօնականը պիտի անջատեն զուտ աշխարհական գործերէն, գլխաւորաբար ուրեմն պէտք է դիտել թէ ինչ հիման վրայ կ'առուցուած են այս սահմանադրութիւնը և իր ժողովները։ Երբեմն միեւնոյն բառերը այլեւայլ իմաստներով կը գործածուին։ Հնար է թէ պարզապէս աշխարհական իշխանութեան մը, պետութեան մը սահմանադրութիւնը պարզապէս աշխարհական սկզբունքով ըլլայ։ Բայց մեր դէպքին մէջ այսպէս չէ։ Նոյն իսկ Էջմիածնական հասարակութիւնը Օսմ. Պետութեան մէջ ճանչցուած է ո՛չ իբր ազգ, այլ իբր կրօնական հասարակութիւն մը։ Իրենք ալ կը վկայեն այսմ, եթէ մանաւանդ քաջ յիշեն՝ ճեմիէի, միլիէի բառերուն իմաստը եւ գործածութիւնը եւ անոնց շուրջ ծագած վէճերը։ Ընդ մեր մասին կրցանք չմոռնալ այս բաները, իրենք ալ կրնային մոռցած չըլլալ։ Զայս, այլուստ, բացայայտօրէն կ'ապացուցանէ իրենց Սահմանադրական օրինադրին ամբողջութիւնը, օրէնքին մարմինը։ Սկիզբէն մինչեւ վերջը հաստատուած է ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԱՇԽԱՐՀԱԿԱՆ զօղեալ վարչութեան վրայ, անանջատ՝ ինչպէս հոգի եւ մարմին, որ մարդը կը կազմեն։ Հո՛ն՝ օրէնքին բոլոր յօդուածները առ այս կը հային, ա՛յս իմաստով միայն կը վճռեն։ Եկեղեցականութիւնը, իր գոյութեամբ եւ իր պաշտօնին էութեամբ, — ձեռնադրութիւն, անուանում, պաշտօնականութիւն, պատու հասակոծում, — ննթարկուած է այդ սահմանադրութեան, այս է՝ աշխարհականացած է։

Նոյնպէս՝ ծէս, արարողութիւնք, եկեղեցիք, թեմականութիւն, անոր քմահաճոյից ենթարկուած են։ Խառն ժողով մը, որ ձեռնադրել կու տայ, կը դատէ, կը պատժէ եպ.ները։ Վարդապետները, քահանաները։ Ազգային ժողով մը՝ որ անբողբոյս օրէնսդիր է ամէն սրբազան իրաց և անձանց համար։ Նոյնպէս անոր գերիշխան վճիռներէն կախումն ունի ընդհանուր ուսուցումը, մանկութեան դաստիարակութիւնը՝ հոգեկան ու մտաւորական, ուսուցման եղանակն ու հեղինակները, վարժապետները, թաղականութիւնք ու մատակարարութիւն ընչից և ստացուածոց, եւն. եւն.։ Էջմիածնականաց Սահմանադրութեան ուղ և ծուծն է այս ուղին։ Առանց այս ոգւոյ՝ չկայ Հայ Էջմ. Սահմանադրութիւն։

Հետեւաբար, լքանել ինքնուրոյն վարչութիւնը, ընդունիլ Էջմ. Սահմանադրութեան լուծը, միանալ Էջմ. ժողովներու, ուրիշ բան չի նշանակիր, եթէ ոչ վերեւ բացատրուած ոգին նոյնութեամբ և ամբողջութեամբ ընդունիլ. ապա թէ ոչ բառերու հետ խաղալ մըն է։ — Արդ. Կաթողիկէիցս համար այդ ԱՆՀՆԱՐԻՆ է, քանզի Կաթողիկէութեան ոգին այն ոգւոյն տրամագծօրէն հակառակն է, հակոռոնեայն է։

Գ. Եւ անա կը հասկցուի թէ ո՛րքան աւելի հաստ և անհետեւողական է՝ ըսել թէ, յարանուանութիւնք պիտի պահեն իրենց զուտ կրօնական սկզբունքները, Էջմ. Սահմանադրութեան ընդունիլն իսկ անկարելի կ'ընէ զայս։ — Եւ բաց աստի ո՛վ պիտի ըլլայ արդեօք դատաւորը՝ թէ խնդիր մը զուտ կրօնական է... ստիպողական, տապնապալից հարց, որուն պատասխանը հաւասար է այդ պիտի միաբանութեան մը անկարելիութեանը։

Ծ. Ո՛ւր թողունք մանաւանդ այդ յարատեւ չփռւմին յառաջ բերելիք անպատեհութիւնները, միջավայրի մը մէջ մանաւանդ որ անօրինակ անխտրական է, անտարբեր է, կուտակցամոլ է։ միջավայրի մը մէջ, որ՝ ամէն աղանդներու համար գորովալիք ըլլալովն հանդերձ, միայն Կաթողիկէութեան ուխտած է անհաշտ հակառակութիւն, անոր Պետերը

կը նախատէ : կը ծաղրէ շարունակ , ի հե-
ճուկս ճշմարտութեան , կը մասնանշէ զայն՝
իրր ազգայնութեան վնասակար ու մասնիչ ,
և այս համոզումով կը տրամաբանէ , կը խո-
սի ու կը գրէ : Կաթողիկէութիւնը իրենց
համար հոմանիշ է մոլեռանդութեան , ան-
դրաւեճականութեան , լատինամոլութեան ,
սլաւփաղաւանութեան , իրենց համար Կաթո-
ղիկէ Հայր «Աղքատներու , մոգերու , կա-
խորդներու չափ զգուելի» է¹ . ստորին թըշ-
նամանքներ , զրպարտութիւններ և ճշմար-
տութեան ուրացում : Ո՞ր կաթողիկէն ա-
ռանձնաբար պիտի կարենայ վստահիլ քնաւ-
չգայթեկու չգայթակղելու այսպիսի միու-
թեան մը մէջ , և ինչ պիտի ըլլայ ամբողջ
հասարակութեանս բախար , այս ամենավը-
տանգալից նորահնար վարչական համերաշ-
խութեան մէջ :

4. Արձագանգի մէջ մասնաւոր յօդուած-
ներով այս վտանգը ի վեր հանուեցաւ ո՛չ
թէ միայն այս տեսակ վարչական հիմնական
միութեան մը համար , այլ լոկ եղբայրսիրա-
կան վաղանցուկ համագործակցութեան մը
մասին¹ :

Ո՛հ , այս ենթադրեալ պարագայից մէջ
կարի սպառնալից է ապագան , մոայլ ամ-
պերով ծածկուած է հորիզոնը : Եթէ ներկա-
յէն չափուի ապագան , բեր կորուստներ կը
սպառնայ : Մեր Հոգեւոր Պետը այժմ ան-
դադար կը նախատուի , մեր հոգեւոր իշխա-
նութիւնը չի ճանչցուիր ու կ'ուրացուի . մեր
ըմբոստները կը խրախուսուին ու պաշտօնա-
պէս անոնք միայն կը ճանչցուին . կը նա-
խատուի նաև , և իրենց Ազգային Սահմա-
նադրական Ժողովին մէջ և Պատրիարքին
առջեւ , մեր Ս . Բահանայապետը զոր կը
յարգեն ինքնակալներ և ամէն քաղաքա-
կրթուած ազգեր և որ կը վարէ 400 միլիոն
առաջնակարգ Ժողովուրդներու ճակատագի-
րը , Բողոքականաց հետ կ'եղբայրակցին , կը
հաղորդակցին , ներողամիտ են անոնց Աւե-

տարանի ու Եկեղեցւոյ ուրացումներուն .
միայն Կաթողիկէայք նշաւակ են իրենց
թունաւոր փքիներուն . անհաշտ են անոնց
հետ միայն , որոնք ճշմարտութեան լուսոյն
ռահվիրաններն են . սիրելի առած է նաև ի-
րենց՝ «Լաւագոյն է փաթոցը քան փեղոյրը» :
Մենք , սպառնական պատահականութեանց
առջեւ , ստիպուած ենք այս իրականու-
թիւններն ըսելու , մի՛ գուցէ միամիտներ
ոսկեղօծ բառերով տատամսին , խաբուին ,
համոզուին , ուզեն տեղի տալ :

6. Հիմա յայտնի փաստով մը , իրենց
խակ խոստովանութեամբ , կ'ուզենք անցո-
ղաբար ապացուցանել ցարդ ըսուածները :

Ժամանակ թերթին 1606 թիւին մէջ
առաջնորդող յօդուած մը կար , Ս . Օսեան
ստորագրութեամբ , այսինքն՝ այն մարդուն
որ շարունակ կը ծաղրաբանէ Աստուածային
ու կրօնական սրբութիւններուն շուրջը , և
որ սակայն անդամ է էջմ . Ազգ . Ժողովոյ ,
և նաև այն սահմանադրական մասնաժողո-
վին՝ որ ի գլուխ հանեց Բողոքականաց այս-
քան մեծաշունչ միաբանութիւնը : Նա՛ իրեն
զաղափարներուն հետ , կը պարզէ նաև տե-
սութիւնները «Հայ Կաթոլիկ հասարակու-
թեան պատկանող ծանօթ անձնաւորութեան
մը որ պատշոնական հանգամանք ալ կը կրէ
(եղեր) , իբրեւ երեւելիներու ժողովին ան-
դամ» : Այս թատերական հնարքը՝ այս անձ-
նաւորութիւնը , ենթադրական կամ իրական ,
ստոյգ է որ Կաթողիկէ չէ , եթէ ի նկատի
աւելուին իր արտաոտոց կարծիքներն ու խոս-
տովանութիւնները . կարելի է խեղկատա-
կութեան , զաւեշտի ու մտայածին ցնորք-
ներ մարմնաւորելու քաջավարժ յօդուածա-
գրին կողմանէ նկատուած հրապուրալից կեր
և խանձ մ'ըլլայ , ի ծառայութիւն իր մաս-
նակցած միութենական մասնաժողովին , ո-
գինները պատրաստուելու համար . — ձախող
մտայնութիւն , ձախողագոյն փորձ :

Վերլուծում չարժեր . միայն ցոյց տրե՛նք :
Կ'ըսէ . «Հայ-Կաթոլիկները ուժեղ պատճառ-

¹ Տե՛ս Կ . Արձագանգի 402, 403, 409, 444, 415
թիւերուն մէջ՝ «Եկեղեցական—Դիւանական» վերնագիրը
կրող յօդուածները :

¹ Տե՛ս Տաճար , 4913, թ . 18, էջ 354, և Կ . Ար-
ձագանգ , թիւ 408. էջ 544 :

ներ ունին իրենց վրային բօրափելու Սափր Աղանիի Պատրիարքարանին անհանելի ու բռնաւոր լուծը»:

Hic latet կամ լաւ ևս patet anguis. Ահա հո՛ւ թագուն է — կամ յայտնի՝ — օձը, առակին: Անպատճառ կ'ուզուի ջնջել Կաթողիկէ Պատրիարքարանը, ահաւոր փուշը, անզսպելի, անտեղիտալի, անընկճելի ախայեանը՝ Սրբութեանց, ճշգրիտ պահպանողականը՝ կրօնից և ազգին նուիրականութեանց: Այսպէս կ'ուզեն էջմիածնականք: Բայց թէ գիտնային...

Շաղակրատութիւններ են միայն իր Կաթողիկ խօսակիցին վերագրածները:

Սուտ է և աններելի տգիտութիւն է կամ խոտելի ծաղրածութիւն՝ հաստատելը թէ մենք կրնանք կամ կ'ուզենք մեր հոգեւորական պէտքերը լատին ծէսով ընել տալ. — այդ անկարելի է. էջմիածնականները զժրախառքար Բողոքական պիտի ըլլան. բայց մենք չպիտի լատինանանք, ինչպէս իրենք անպատկառ կը զրպարտեն. ինչո՞ւ. սա պարզ պատճառներու համար որ բնաւ իր ծէսը փոխելու հարկ չկայ՝ ճշմարիտ եկեղեցւոյ հետեւելու համար. և դարեր վկայ են և մեր գոյութիւնը և Արեւելեան ուրիշ ծէսերու Կաթողիկէից գոյութիւնն ալ վկայ են այս մեր ըսածին ճշմարտութեանը: Մենք չպիտի լատինանանք գլխաւորաբար, որովհետեւ՝ Ս. Քահանայապետները բացարձակապէս արգիլած են ծիսափոխութիւնը. գո՛նէ կարդան մեծափառ Լեւոն Ժ. Գ. «Արեւելեան եկեղեցեաց» հոյակապ և անմոռանալի Կոնդակը:

Այս տեսակ անճաշակ զրաբանութիւններով չէ՛ որ միաբանութիւն կը գոյանայ. — մանաւանդ թէ հակառակը. զի մարդդ ճանչցած կ'ըլլաս...

Եւ յիրաւի, ճանչցած չե՞ս ըլլար մարդդ՝ երբ կարդաս սա նախատալից խօսքերը, ա'յնպիսի մտքէն ու գրչէն ծորած.

«Մեր (Կաթողիկաց) իրրեւ թէ՛) հաւատացեալները, ընդհանրապէս պառաւ կիներ, Լատին եկեղեցիները կը յանախեն»:

Այս խօսքերը ստորագրողը կ'երեւի թէ՛

եթէ ոչ հայ, գո՛նէ գաղղիերէն բողոքի մէջ չէ հանդիպած անչնայ բառին: Եւ ա. սո՞նք են անդամներն Համազգային Միաբանութեան մասնաժողովին, և ա'յսպէս կը քարոզեն համերաշխութիւն...

Նոյնը չէ՞ միթէ սա խօսքն ալ.

«Մեր Կաթողիկոս-Պատրիարք եւ վարդապետները ի՛նչ որ կ'ուզեն ըլլան, քո՛ղ իրենց գլխուն ճարը նային: Արդե՞ն մեր եկեղեցականները բեռ մըն են Վասիկանի վրայ, եւ Վասիկան շա՛հ հաւատալով պիտի նայի այդպիսի կարգադրութեան մը»:

Այդ մարդը ա'րդեօք Հօթէնթօթներու կամ Զուլուներո՛ւ քարոզել կը կարծէ.

Այնպէս կ'երեւի. քանզի, տեսէ՛ք, ի՛նչպէս կը փակէ այս անհամ ծաղրաբանութիւնը, որ առաջնորդող, այսինքն՝ տրամաբանական, լուրջ, իմաստասիրական յօդուած մը ըլլալու պատիւ ունեցեր է!!!...

«Այսպէս խօսեցաւ ինձի Հայ Կաթողիկ անձնաւորութիւնը եւ նկատեցի որ իրաւունք ունեւ»:

Այո՛, ա'յն իրաւունքը՝ զոր ունեցաւ գալլը, գառնուկին հանդէպ, առուակին եղբորը. կը յիշէ՞ք առակը...

Այս թէութիւններով կրնա՞ք, և կ'ուզէ՞ք միանալ, ո՛վ ճշմարիտ Հայ-Կաթողիկեայք:

ԿԱԹՈՂԻԿԷ

ԵՐԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵԻ

ՏՕՆԱՅՈՅՑ

Նոյեմբեր	9	† Կիր. դկ.	Ը. զկնի Խաչին
	10	Բշ. աճ.	Մելիսոսի Անիոյ Հայրապետին եւ Միմասայ Եղիսայեայնի, եւ Մելեայ Եպիսկոպոսին եւ Եբրայ Բահանային եւ Շինու սարկաւագին:
	11	Գշ. աղ.	Յովնանու Ոսկեբերանին:
	12	Դշ. քճ.	Պահոց:
	13	Եշ. քկ.	Գուրխասայ, Սամեմասայ եւ Աբիբայ Սարկաւագին եւ Ռոմանոսի միայնակեցին եւս մանկան խոսովանողի եւ Հիւսիֆոսի զինաւորին:
	14	Ուրբ. քճ.	Պահոց:
	15	Շք. գկ.	Փիլիպպոսի Առաքելոյն:

Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՀՌՈՒՄԱՅ ՀԱՅՐԱՊԵՏ

Ս. Ստեփանոս Հռոմայ հայրապետը բնիկ հռոմայեցի էր։ Կոստանդնուս և Ղազկիոս Քահանայապետներուն սարկաւազապետ եղաւ, որոնք իրենց մարտիրոսանալէն առաջ անոր յանձնեցին եկեղեցւոյն բոլոր ինչքերը։ 254ին Քահանայապետ ընտրուեցաւ և եղաւ Ս. Պետրոսի քանուկերէքերորդ յաջորդը։ Իր քահանայապետութեան սկիզբները եկեղեցին երեք տարիի չափ խաղաղութիւն վայելեց. ուստի և յոյն միջոցին Ս. Ստեփանոս կրցաւ վարել իր պաշտօնը շատ արդիւնաւոր կերպով։ Իր խնամքը վր վայելէին յոյն իսկ Ասորիք և Արարացիք ինչպէս կը վկայէ Ս. Գիորնեսիոս Աղեքսանդրիայի հայրապետը։ Մօտաւորները խօսքով իսկ հեռաւորները գրով կը մխիթարէր և ճշմարիտ հաւատքի մէջ կը հաստատէր։ Ս. Ստեփանոս իր ամբողջ ուժովը հակառակ կեցաւ Ս. Կիպրիանոսի հերետիկոսաց կրկին մկրտութեան մասին ունեցած ծռու կարծիքին։

Երբ Աղեքսանդոս Կայսրը հալածանք հանեց, Ս. Ստեփանոս հաւատացեալները ժողովելով, քաջալերեց, երախաները, նորադարձները մկրտեց և ձեռնադրեց արժանաւորները։ Նեմեսիոս Իշխանին ի ծնէ կոյր դուստրը, Լուկիան բժշկեց, մկրտեց, և Նեմեսիոսը սարկաւազ ձեռնադրեց։ Երբ այս ամէնը լսուեցաւ, նահատակուեցան շատ բաճանաւներ սարկաւազներ եւ աթոռակաւներ, տեսակ տեսակ տանջանքներով։ Ս. Հայրապետը նահատակներուն մարմինները պատուով ամփոփեց։ Ապա ինքն ալ շատերուն հետ բռնուեցաւ և բռնի մէջեան սաղուեցաւ որ գից խաւնի ծխէ։ Սուրբը հոն աղօթքի կեցաւ, և մէկէն կուռքերը ահագին շարժումով փչուեցան, այնպէս որ հալածողները գինքը թողուցին փախաւ։ Ս. Հայրապետը այն տեղէն եկաւ վկայարան մը և հոն սուրբ պատարագը մատուց և արժանաւորները հազարէց բայց դեռ պաշտամունքը չաւարտած, դահլիճները արքունի հրամանաւ հասան՝ եկեղեցւոյն դուռը խորտակեցին և սուրով կտրեցին։ Ս. Հայրապետին գլուխը՝ 257ին։

ԵՐԹՆ ՄԱՆԿՈՒՆԻՔ ԵՓԵՍՈՍԻ

Եփեսոսի եօթը մանուկները, որ եօթը ննջողներ ալ կ'ըսուին, Եփեսոսի մեծամեծներու զաւակներն են։ Դիակոսի հալածանքին ժամանակ տեսնելով քրիստոնէից բարեպաշտութիւնը, Քրիստոսի հաւատացին, և ի ծածուկ մկրտուելով կոչուեցան Մաքսիմանոս, Մարտիրոս, Ամոնիոս, Դիոնիսիոս, Կոստանդիանոս, Անեմիոս եւ Յովնանէս։ Երբոր ասոնց քրիստոնէայ ըլլալը յայտնուեցաւ, բռնուեցան և Դիակոսի առջեւ տարուեցան, և հակառակ Կայսեր ըստաւանդներուն և խոտուածներուն՝ համարձակ խօսողանքներ իրենց հաւատքը։ Դիակոս զանոնք ծեծել տուաւ իրբեւ ստահակներ, և տաւերներն զրկեց որ զգաստանան։ Իսկ Աստուածատէր երեսասարգները պատեհ առիթ մը գտնելով քաջքէն ծածուկ մեկնե-

ցան և գացին մօտակայ Ողբոս լեռը, և հոն պարի մը մէջ սկսան ճգնել։ Իրենցմէ մէկը, Ամոնիոս տնտէրով, ամէն օր ծպտեալ քաղաք կու գար, կերակուր կը գնէր և կը դառնար։

Օր մը երբ Ամոնիոս քաղաք գացեր էր ըստ սովորութեան կերակուր բերելու, լսեց որ Դիակոս բռնաւորը դարձեալ Եփեսոս եկեր է և տեսաւ հաւատացեալաց սուրի և հուրի բանտի և ամէն տեսակ տանջանքներու մոտենալը։ Լսեց նաեւ թէ արքունի խնդրակներ զիրենք կը փնտռէին։ Աճապարեց, հաղիւ քիչ մը հաց առնելով դարձաւ իր ընկերներուն քով և անոնց պատմեց ինչ որ տեսած և լսած էր։ Բերած քիչ մը հացը կերան ամէնքը և Աստուծոյ շնորհակալ ըլլալով, խնդրեցին որ հայտածաւորը գաղթեցնէ։ Ապա Ամոնիոսին ըսին որ երկրորդ օրը կանուխ երթալ մի քանի օրուան համար միանգամայն հաց առնու և դառնայ։ Եւ իրենք զիրենք Աստուծոյ յանձնելով քնացան, և այնպէս մնացին իրբեւ մեռեալ, և անտպակտ պահաւեցան Աստուծոյ խնամքովը մինչեւ Մեծն Թեոդոսի ատենը, հարիւր քառասուն տարիի չափ։ Այն ժամանակ յարութիւն առին Աստուծոյ զօրութեամբ, և քրիստոնէութեան ծաղկելը և բարգաւաճելը տեսնելէ յետոյ ուրախութեամբ իրենց կեանքը։

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ „ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ“ ԳՐԲԷՆ

Գրիգ. Ա.—Գլ. ԺԵ.—Ի սիրոյ կոստաւրուստ զործոց վրայ։
(Շար.)

Շատ կը գործէ, ով որ շատ կը սիրէ։
Շատ կը գործէ. ով որ շատ կը գործէ։
Լաւ կը գործէ, ով որ աւելի հասարակութեան կը ծառայէ քան իր կամքին։
Յաճախ կը կարծուի քե սեր է, եւ աւելի մարմնասիրութիւն է. որովհետեւ յնալիս միտումը, սեպհակուն կամքը, հասունումի յոյսը, անմեղիւրութեան փափակը քիչ անգամ կ'ուզեն քացակայիլ։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ?

ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԵՆԱՄԵԾ ԱՐՁԱՆՆԵՐԸ

Կրիստոմ Բ. Նաբլեկիոյ Հաագոն թագաւորին ընծ սյեց սքանախաւեան առասպելական Դիոցաղինի, Պրիթմոֆի արձանը, իբրեւ հրակայական նուէր մը, ինչպէս կ'ըսեն Գերմանիոյ մէջ։

Այս արձանը, զործ Մաքս Ունկէր վարպետին, 12 մէդր բարձրութիւն ունի. բայց

արտակարգ բան մը չ'երեւար երբ բաղդատուի ուրիշ անդրիներու հետ, զոր պատմութիւնը արձանագրած է:

Յիշենք նախ Եգիպտոսի սիւնքը որ 6 մէդր բարձր է և 39 մէդր երկայն: Թէքէ քաղաքը, Քառնաքի տաճարին փլատակներուն մէջ 66 մէդր բարձր երկու միակտուր քարեր կան:

Յունաստանի մէջ, Փիգիսոս քանդակեց թէ՛ գեղեցկութեամբ և թէ՛ մեծութեամբնը՝ շանտուր երկու արձաններ, մին Աթենասոս, որ ամբողջ կուճէ, փղոսկրէ և ոսկիէ էր և իր պատուանդանին հետ 22 մէդր բարձրութենէ մը կ'իշխէր վերնաբերդին վրայ: Երկրորդը էր Ոլիմպական Զեւսի, որ նստած էր, բայց կանգուն դիրքի մէջ 14 մէդր բարձրութիւն կրնար ունենալ ըստ Պաւսանիասի:

Յիշատակութեան արժանի է նաև Հռոդոսի Անդրին, Հեղիոս տեղական դից վիթխարի արձանը, որ 32 մէդր բարձր էր:

Միքէլ Անճէլօ քանդակեց Դաւիթի, Յուլիոս Բ. ի, եւ Մովսէսի յաղթահառակ արձանները:

Մոճճօրէ յիճին ծայրը, Արոնս գիւղին մէջ, 1896 էն ի վեր, Ս. Կարոլոս Բորրումէոսի արձանը կայ որ 19 մէդր բարձր է, և ունի 13 մէդր բարձր պատուանդան մը:

Միւնիխի մէջ, Պափիերան անձնաւորող արձան մը 15 մէդր բարձրութիւն ունի:

Վերջապէս Նիւ-Եօքի մէջ կը գտնուի Ալիսաբհ լուսաւորող Ագասութիւնը, որուն բարձրութիւնն է 74 մէդր, և ունի 25 մէդր բարձր պատուանդան մը:

ԺԱՄԱԳՈՐԾԻ ՄԸ ՏԱՊԱՆԱԳԻՐԸ

Ուղեւոր մը հետեւեալ տապանագիրը գրտեր է ժամացոյցի կողմէ նշանաւոր Զուիցերիոյ մէկ գերեզմանատան մէջ:

Հոս կը հանգչի

«Հորիզոնական» դիրքի մէջ

Տ. Ա.

Կենդանութեան ատեն «Ժամագործ»

Պատիւը եղաւ իր կեանքին «մղանակը», եւ աշխատանքը՝ իր ժամանակին «ուղղիչը»:

Իր «Հարժումները» լաւ էին:

Առողջօր կրկիւզը և ընկերով սէրը Նզուն միշտ իր ընթացքին «բանալին»:

Երջանիկ ապրեցաւ մինչեւ այն պահուն,

Ուր տիեզերքի մեծ «Ժամագործ»ը

Պատշաճ համարեցաւ փշրել

Իր օրերուն չղթան:

Այս բանս տեղի ունեցաւ իր հասակին...

ԿԱԹՈՂԻԿԷ ԴԻԻՑԱԶՆՈՒՀԻՆ

Վերջերս Գէորգինէ Բավլովիչ անունով Սերպ-Օրթոտքս Պոմիադի ուսեալ օրիորդ մը՝ կաթողիկէութիւնն ընդունելով Յիսուս-Մանկան Աղախններուն կաթողիկէ վանքը մտաւ: Այս դարձը տեղի ունեցաւ օրինաց ամէն տրամադրութիւններուն համեմատ:

Անմիջապէս սերպ մամուլը բուռն յարձակումներ գործել սկսաւ, պժգայի զրպարտութիւններ նետելով օրիորդին վրայ, և դատապարտելով Սթապլէր Կաթողիկէ Արքեպիսկոպոսը: Օր մը երբ օրիորդը վանքին մօտակայ մէկ փողոցէն կ'անցնէր, Սերպերը բռնի լոտեցին զինքը և տարին: Արքեպիսկոպոսին կրկնուած խնդրագիրներուն վրայ, Գէորգինէ յանձնուեցաւ ոստիկաններու և հարցաքննութեան ենթարկուեցաւ: Օրիորդը արիւարար յայտարարեց թէ, Կաթողիկէութիւնը ընդունել է պիտակցարար և համոզմամբ և վանքը մտեր է ինք իր կամքովը: Աւելցուց նաև թէ ինք կ'ուզէ ապրիլ և մեռնիլ Կաթողիկէ և մայրապետ... Հետեւեալ երկու օրերը իրեն համար բարոյական ըստոյգ տանջանքի օրեր եղան: Ստիպուեցաւ շատ անգամ ելլելու օրթոտքս մեծամեծներու ժողովին առջև, որոնք զինքը օրթոտքութեան դառնալու բռնադատելու համար ամէն հնարք գործածեցին:

Կառավարութեան պատուիրակը, Պարսն Գոլաս, մինչեւ անգամ անվաւեր համարելով այս դարձը՝ կը ստիպէր օրիորդը որ ժոնէ Զէթինսէի կամ Գիէվի օրթոտքս մէկ վանքը, և այս նպատակաւ անցապիւր մըն ալ կը ներկայացնէր օրիորդին:

Երբ տեսան թէ այս բարոյական տանջ

ջանքները արդիւնք մը չէին յառաջ բերեր, որոշեցին գործել անսպալման՝ ահաբեկիչ եղանակաւ:

Օրթոտոքս քահանայ մը եկաւ, հանդիսաւոր կերպով նզովք կարդաց օրիորդին վրայ, Յետոյ կանչեցին մայրը և հրամայեցին որ իր աղջիկը անիծէ: Այս միջոցին օրիորդը կ'աղօթէր և կ'աթողիկէ Հաւատամքը կը զուրցէր:

Օրթոտոքսները այսօրինակ դիւցազնական ընթացք մը ուղեցին յիմարութիւն որակել սակախ չյաջողեցան, որովհետեւ Աստուծոյ Աղախնոցն վարմունքն ու խօսուածքը տեղի չէին տար ո՛ր և է կասկածի: Ուստի... վերջապէս ստիպուեցան զինքը աղատ թողուլ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ո Ռ Մ Ե Ի Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Է Ա Շ Խ Ա Ր Հ

Այսօրից դահլիճը, որ հինգ տարիէ ի վեր ազատական տարրերէ կը կազմուէր, հոկտեմբեր 25ին տապալեցաւ: Ծերակոյտին մէջ դահլիճին նախագահը, Կոմս Ռոմանովն անվստահութեան ենթարկուեցաւ 103ի դէմ 106 քուէով, և ստիպուեցաւ իր հրաժարականը տալ թագաւորին: Ալֆոնս Ժ. Էնդուեցաւ հրաժարականը և հրաւիրեց Մ. Մաւրան, Պաշտպանողականներու Պետը որ նոր դահլիճը կազմէ, սակայն ան յանձն չտուաւ: Թագաւորը Մ. Մաւրայի խորհուրդով այս պաշտօնը տուաւ Մ. Տաթոյին: Եւ նոր դահլիճը կազմուեցաւ այսպէս.

Նախագահ	Մ. Տաթօ
Ներքին գործոց նախարար	Մ. Սանքէս Կէրրա
Արտաքին »	Լէմույի Մարքիզ
Իշխմանից »	Մ. Պուկալալ
Արդարութեան »	Վատիկոյի Մարքիզ
Հանրային գործոց »	Մ. Ուկարթ
Կրթական »	Մ. Պերկամէն
Պատերազմական »	Էսխա զօրավարը
Մովսէսի »	Միրանտա

Հոկտ. 27ին նոր Նախարարները երգում էին միջոցը նորընտիր Նախարարները պաշտպանողական են:

*. Ս. Հայրը վերջերս առանձին ունեցողութեան ընդունեցաւ Գոլոնիոյ Վոլֆիգլէյուսկ թերթին Հռոմայեցի թղթակից Մ. Գաբրէլիակը, որ, յանուն Պոնտի կաթողիկէ Միութեան, Ն. Արքեպիսկոպոսն ինքն իրեն հետ յարեցան յարեցան ինքն ինքն հաւաքուած ճոխ նուէր մը:

*. Հռոմ հասան Պապականի Արքեպիսկոպոսը եւ Սէքրետի և Լէյթմէրիսի Իշխան-Եպիսկոպոսները:

*. Պոնտիական գաւառներու Սերայէվօ մայրաքաղաքին առաջին Առքեպիսկոպոս Սթապէր Գերապայծառը Վիեննա դուքեր է և Շէնպարու Պալատին մէջ Աւստրիոյ կայսեր կողմէ մեծ պատուով ընդունուեց:

Ծերունի Վեհապետը շատ սէր ցոյց տուեց է Ն. Արհիպիսկոպոսին և մի շահագրգռութեամբ յետէ անոր թեմին Կաթողիկէից մասին պատմածները:

Սթապէր Գերապայծառը Վիեննայէն Հռոմ պիտի երթայ Սերայէվոյի թեմին նկատմամբ Ս. Հոր տեղեկութիւններ տալու համար:

*. Ս. Քահանայապետը յատուկ նամակ մը ուղղեց Յիսուսեան Հ. Քիսուստոնոյի, Չիլիքո Գաթողիգա թերթին խմբագրապետին, ուր կը գովէ անոր վարդապետական հաւատարմութիւնը Բրիտանիոյ վախճանողին նկատմամբ ունեցած հլութիւնը և անոր անգղազական արդիւնքները սրնցմով արժանի եղած է նախագահ ըլլալու Չիլիքոյի խմբագիրներուն հըրակումը:

*. Մոթանիին Գերապայծառը, Գոլոնիոյի Առաքելական նուիրակը Պերլին մէջ վախճանեցաւ: Այս առթիւ Գոլոնիոյի արտաքին գործոց նախարարը Տոն Փապո Գարբէնո ցաւակցական հեռագիր մը ուղղեց Ս. Հոր:

ՀԱՅ ԿԱՅՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆ

Առաջիկայ Կիրակի ըստ սովորութեան պիտի կատարուի Եր. Տէր Կոմիտաս Քահանային նահատակութեան տարեգարձը Սամաթիոյ Ա. Յղութեան եկեղեցիին մէջ, ուր Ս. Պատարագ պիտի մատուցուի ժամը 10ին (Ը. Ե.): Ս. Պատարագէն վերջը, այցելութիւն պիտի կատարուի նոյն Վկային Պալլադը գանուող նուիրական Շիրմին:

*. Հինգշաբթի օրը ժամը 9ին, Ս. Սատուածածին Աթոռանիստ եկեղեցւոյ մէջ Պատարագ մատուցուեցաւ Վսեմ. Հասուն Կաթողիկոս Միրանտաին հոգւոյն համար: Պատարագէն յետոյ հանգստեան պաշտօն կատարուեցաւ հանդիսութեամբ: Ներկայ էին Աւագ Թեմին մէջ գանուող Վարդապետները և բազմաթիւ ժողովուրդ: Եկեղեցւոյ արարողութիւններէն վերջը Վարդապետները խմբովին Կաթողիկոսանի օրաշը ելլելով Ն. Իերերջանիկ Տէրութեան աջ համբուրեցին:

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Թանին թուրքեհ հիլլէն բանակցութեանց վրայ խմբագրականի ի մը մէջ կ'ըսէ թէ հինգ ինդիկներ կան, որոնք այժմ վեճի առարկայ են. 1. Յունաստանի պաշտօնէն որ ընդհ. ներքին շտաբի Օսմ. բանակին յայտն գինուոյնը, որ հիլլէն բանակին միանալով իրենց զէնքի ընկերներուն գէմ կուռեցան: Արդ, կ'ըսէ Թանին, Յունաստան պետք է գիտնայ թէ մենք երբեք մի մասնիչները պիտի չընդունինք մեր մէջ: 2. Բ. Իսլամը

կը յայտարարէ թէ գրաւեալ երկիրներուն այն բնիկները որ թուրքիա կը գտնուին, հելլէն հպատակութիւնն ընդունելու իրաւունք ունենալով հանդերձ, օսմ. հպատակ պիտի նկատուին որքան ատեն որ թուրքիա փնտռէ իրենց: Եթէ Հելլէնները մերժեն այս պահանջութիւնը, յանցանքն որո՞ւ պիտի ըլլայ: 3. Յունաստանն կ'առաջարկէ որ այն վագրֆները որոնց հասցըթը թուրքիայ մէջ բարենպաստակ հաստատութիւններու յատկացած են, յանձնաձեռն Յունաստանի իսլամ հասարակութեանց և ոչ թէ Էվզաֆի նախարարութեան կողմէ: Իսկ Բ. Դուռը չ'ուզեր յանձնաձեռն յանձնել հելլէնահպատակ իսլամի մը, զոր ինք պիտի անուանէ: Կ'առաջարկէ նաեւ որ Յունաստան ծախսու առնէ վագրֆները: Յունաստան չ'ուզեր ծանօնալ վագրֆներն երբու տասանորդը: Իսկ Բ. Դուռը կը պատկանէ մասնաւորներու իրաւունքը: 4. Օսմ. Կառավարութիւնը պարտք կը սեպէ խորհիլ իսլամ սեփականատէրներու իրաւունց վրայ: Ուստի կը պահանջէ որ բացառիկ օրէնք մը չգործադրուի իսլամներուն մասին և ո՛ր և է գրաւում չըլլայ առանց փոխարէնը հատուցանելու: 5. Յունաստան չ'ուզեր ծանօնալ բարոյական անձերու սեփականութիւնները: Իրաւ է թէ բարոյական անձերու սեփականութեանց օրէնքը հըրատարական եղաւ նոր երկիրները Յունաստանի կողմէ գրաւուելէն ետք, բայց սեփականութիւններ կան, որ նոյն իսկ օրէնքին հրատարակումէն առաջ, անցած են այդ օրէնքին սահմանին մէջ: Սեփականութիւնները չ'անշնայը գողութիւն պիտի ըլլար կ'աւելցնէ Թանին:

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Պուլկար Էկզարը իր աթոռը Պուլկէն Սօֆիա փոխադրեց պայտօնապետ Ասով կարուեցան վերջնականօրէն այն կապերը, որոնք Պուլկար եկեղեցին կը զօդէին Յոյն եկեղեցւոյն հետ, որուն Պատրիարքը կը նստի Գանար, Պալոս մէջ:

Օսմանեան տիրապետութենէն սկսեալ մինչև 1860 պուլկարները կրօնական տեսակետով հպատակ էին Գանարի Պատրիարքին, որ կը ջանար զանոնք հելլէնացեալու, պէտք եղած ատեն բռնութեամբ, անոնց տարով հելլէն կղերականներ, հելլէն արարողութիւններ, մէկ խօսքով, ամէն հնարք կը գործածէր Պուլկար ազգութիւնը կուլ տալու:

1860ին Պուլկարները յաջողեցան, մեծ դժուարութեամբ, ունենալ Պուլկար կրօնական պետ մը, Էկզարք անունով: Եւ միանգամայն Պուլկար կղերականներ, Սակայն Էկզարքը միշտ ենթակայ էր, թէեւ հեռուանց, Գանարի Պատրիարքին գերիշխանութեան: Ահա՛ այս վերջին կապն այ կը խզուի Էկզարքութեան Սօֆիա փոխադրելովը. և աւելի կը դիւրանայ Պուլկարներուն Հասմի հետ միացումը, որուն մասին շատ կը խօսուի այժմ:

Վերջերս յեղաշրջական մեծ շարժումներ տեղի ունեցան Լիսպոնի մէջ, ուր երեք տարիէ ի վեր ազատօրէնադրական ահաբեկիչ հարստահարութիւն մը կը տիրէր: Յայտնի է թէ բռնութիւնը, հալածանքը, անիրաւանութիւնը վարչական գրութիւններ չեն: Այս երեք տարուան մէջ իրարու յարգող ահաբեկչականութիւնները բուռնանէն աւելի ցոյց կու տան թէ վաղ կամ անագան Փորթուկալի որմնադիրները պիտի ջորջախուսէին: Կը մտղծեմք բոլոր սրտանց որ այս արգարութեան օրը շուտով ծագի:

Բարիզ, 4 Նոյ.— Բեդերոպուրկէն կը գրեն Թանի թէ Ռուսիոյ մէջ շատ համակիր չեն Յունաստանի, վասն զի Հելլէն փառասիրութիւնները վստահաւոր կը նկատուին Ռուսիոյ շահերուն ներգրգներու խնդրին մէջ: Ռուս ձեռնհաս անձնաւորութիւն մը կ'ըսէ թէ Ռուսիա անվստահութեամբ պիտի նայի Եգէականի մէջ գերակշռութիւն ունենալիք նաւատորմի մը, ո՛ր ազգին այ պատկանի: Եթէ Բ. Դուռը իրապէս ուզէ իրականացնել իր նաւային ծրագիրը և Եգէականի մէջ գերակշռութիւն ունենալ, Ռուսիոյ անվստահութիւնը թուրքիայ գէժ պիտի դաւնայ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Դեպքեր եւ սկզբունքներ	705
Դարձիկալ Հասուն	708
Երանելի Տէր Կոմիտաս Նահասակին պատմական երկու գրութիւնները	710
Համագային միաբանութիւն	711
Եօթնեակ Բրիտանի	716
Այլեւայլ	717
Տեղեկագրական	719

ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՅՈՎԼ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԱԿՐԱՊԵՏ

ԳԷՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԷՂԶԻՊԱՇԵԱՆ

Երանելի Տէր Կոմիտաս Քահանային վարքը, առանձին հրատարակուեցաւ ընտիր թուղթի վրայ, մաքուր տպագրութեամբ և երեք պատմական պատկերներով:

Փափաքելի է որ ամէն Հայ Կաթողիկէ ունենայ այս գեղեցիկ մատենիկը, որուն միակ նպատակն է ծանօթացնել ամէնուն Երանելի նահատակին գերազանց բարեմասնութիւնները, և, անոր ջերմեռանդութիւնը ծաւալելով, հրաւիրել ամէնուն վրայ անոր բարեխօսութեան անզուգական արդիւնքները:

Գին 5 դահեկրան, էջ 144 արևուր թղթակազմ

Գրքոյկիս երեք պատկերները, 1. Տէր Կոմիտաս քահանայական զգեստով և իր շիրիմը, 2. Տէր Կոմիտաս դատաւորին առջև, 3. Գլխատումը, առանձին ալ կը ծախուին. մեծաքանակ գնողներու, գոհացուցիչ զեղչ:

ԿԸ ԾԱՌՈՒԻ «Տարրական Սկզբունք Քրիստոնէական Վարդապետութեան» հաստատեալ եկեղեցական իշխանութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ: Բաղկացած է 136 էջերէ: Գին, ամուր թղթակազմը 2 դ. հին:

